



Լոս Անջելեսի միացյալ դպրոցական շրջան
Ծնողի/խնամակալի կողմից հրապարակայնության լիազորություն և պատասխանատվությունից ազատում

Հարգելի ծնող/խնամակալ,

Լոս Անջելեսի միացյալ դպրոցական շրջանը ձեզնից լիազորություն է խնդրում տպագրման, առևտրի, տեսողական կամ էլեկտրոնային եղանակներով վերարտադրելու այն գործողությունները, որոնց ձեր երեխան մասնակցում է իր կրթական ծրագրի ընթացքում: Ձեր լիազորությունը թույլ կտա մեզ օգտագործել պատրաստված հատուկ նյութերը (1) ուսուցիչներին վերապատրաստելու և/կամ (2) հասարակության իրազեկությունը բարձրացնելու և խթանելու կրթական ծրագրերի շարունակական բնույթն ու բարելավումը գանգվածային լրատվամիջոցների, ցուցանակների, բրոշյուրների, վեբկայքերի, սոցիալական կայքերի, հաստատված բլոգերի և Շրջանի համապատասխան հրատարակությունների միջոցով:

1. Աշակերտի անունը (տպագիր)

2. Ծննդյան տարեթիվը (տպագիր)

3. Ծնողի անունը (տպագիր)

- a. Ես՝ որպես վերը նշված աշակերտի ծնող կամ խնամակալ, լիակատար իրավունք եմ տալիս Լոս Անջելեսի միացյալ դպրոցական շրջանին և դրա լիազորված ներկայացուցիչներին վերը նշված աշակերտի կենսագրական տեղեկությունները, անունը, լուսանկարը և/կամ ձայնը տպագրել, լուսանկարել, ձայնագրել և խմբագրել առևտրի, տեսանյութի, պայդի կամ ներկայումս զարգացած որևէ այլ էլեկտրոնային կամ տպագրված ձևաչափով (այսպես կոչված «Չայնագրություն») վերը նշված կամ դրանց հետ առնչվող նպատակների համար:
- b. Ես հասկանում եմ և համաձայն եմ, որ այսպիսի Չայնագրությունները չեն ենթադրում ոչ մի փոխհատուցում աշակերտին կամ աշակերտի ծնողին կամ խնամակալին:
- c. Ես հասկանում եմ և համաձայն եմ, որ Լոս Անջելեսի միացյալ դպրոցական շրջանը և/կամ դրա լիազորված ներկայացուցիչները կունենան բացառիկ իրավունք, սեփականության իրավունք և հեղինակային իրավունք Չայնագրությունների նկատմամբ:
- d. Ես հասկանում եմ և համաձայն եմ, որ Լոս Անջելեսի միացյալ դպրոցական շրջանը և/կամ դրա լիազորված ներկայացուցիչներն անսահմանափակ իրավունք կունենան օգտագործելու Չայնագրությունները վերը նշված կամ դրան առնչվող նպատակների համար:
- e. Այսպիսով, ես պատասխանատվությունից ազատում եմ Լոս Անջելեսի միացյալ դպրոցական շրջանին և դրա լիազորված ներկայացուցիչներին աշակերտի և/կամ ծնողի կամ խնամակալի կողմից ներկայացված բոլոր տեսակի հայցերից, վնասներից կամ ծախսերից (ներառյալ փաստաբանի վճարները), որոնք կապված կլինեն այդ Չայնագրությունների վերը նշված օգտագործման հետ:

Իմ ստորագրությունը ցույց է տալիս, որ ես կարդացել եմ և հասկանում եմ տվյալ փաստաթուղթը և համաձայն եմ ընդունել դրա դրույթները:

4. Ծնողի/խնամակալի ստորագրություն

5. Ստորագրման ամսաթիվ

6. Հասցե (համար, փողոց, բնակարանի համար)

7. Քաղաք

8. Նահանգ

9. Ինդեքս

10. Հեռախոս

Լիազորության հանձնումը կամավոր է: Խնդրում ենք լրացված ձևաթուղթը վերադարձնել դպրոցին:

11. Տնօրեն

Հաստատված է որպես ձևաթուղթ Գլխավոր Իրավական Խորհրդատուի գրասենյակի կողմից:

12. Դպրոց

Այս ձևաթուղթը չի կարող փոփոխության ենթարկվել առանց Գլխավոր իրավական խորհրդատուի գրասենյակի և Հասարակության հետ կապերի և գանգվածային լրատվամիջոցների գրասենյակների գրավոր հաստատման: